


ՆԱՄԱԿ ԱՂՔԱՏՆԵՐՈՒ ՄԵԻԹԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Արդ, ո՞ր է հարուստներու ուրախութիւնը եւ կամ անոնց մխիթարութիւնը: Ո՛վ աղքատ, որ կը ցանկաս, կը տենջաս եւ կը տխրեցնես քու հեշտ եւ խաղաղ կեանքդ, ինքզինքդ դժբախտ մը եւ թշուառակամ մը կը նկատես եւ կ'արհամարհես քու թանկագին հաստատութիւնդ: Գողերէն վախնալու կարիքը չունիս եւ ոչ ալ աւագակներէն երկիւղելու: Պէտք չունիս մտահոգուելու ո՛չ դաշտին խոտերով եւ ոչ ալ լեռներու արօտավայրերով: Պէտք չունիս հովիւներու նենգութենէն վախնալու եւ ոչ ալ գազաններու յափշտակութենէն: Պէտք չունիս բռնաւորներու բռնութիւններէն եւ ոչ ալ իշխաններու կալանքներէն դողալու: Նախանձոտները չեն նախանձիր քեզի, քսակահատները չեն խաբէր քեզ, ոչ ոքէ կը վախնաս եւ ոչ ալ կ'անհանգստանաս: Իշխաններու վախը եւ տէրերու բարկութիւնը չեն կրնար սարսափեցնել աղքատը: Ոչ ոք կրնայ կողոպտել աղքատը եւ կամ նեղել զայն եւ սպառնալ անոր: Հարուստը անհանգստացած է եւ անգանգի տակ կը գտնուի, իսկ աղքատը կը ծաղրէ զայն: Հպարտ իշխանը անբարտաւան է հարուստին նկատմամբ, իսկ աղքատը անկարեւոր կը նկատէ զայն: Երկիրը լեցուն է գողերով եւ աւագակներով, բայց աղքատը չի վախնար անոնցմէ: Հրապարակները լեցուն են քսակահատներով եւ բռնաւորներով, բայց աղքատը չի մտահոգուիր անոնցմով: Դատաւորները զայլ եւ գազան դարձած են, բայց աղքատը չի մտահոգուիր անոնցմով, որովհետեւ չքաւորութեան պատճառաւ, իր կեանքը մեծապէս խաղաղ է, գերծ մտահոգութիւններէ, ազատ բոլորին դիմաց, առանց վախի, առանց նախանձի, առանց ոխի եւ հեռու շատ մը մոլորութիւններէ:

Մանուկունի

ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳ



ՊԼՏՊԼՂԻ ԽՈՐՀՈՐԴԻՆ ՀՎՏԼՏՈՒՄԸ 2.- Պատրաստութիւն ընծաներուն

Բ.- ՃԱՇՈՒ ՊԱՇՏՕՆ Հաւատաւորներն ետք, սարկաւազը Հայ Եկեղեցոյ դիրքորոշումը կը բանաձեւէ, որպէս նզովք բոլոր անոնց՝ որոնք վարդապետութեամբ շեղած են ուղղափառ հաւատքէն, եւ որուն կը յաջորդէ Հայ բազմաչարչար հայրապետին փառաբանական օրհնութիւնը.- «Բայց մենք փառաւորներ զԱյն՝ (Քրիստոսը), որ յաիտեաններէն առաջ է, երկրպագելով Սուրբ Երրորդութեան՝ որ մէկ Աստուած է.- Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին. այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտեանից ամէն»:

Շարունակելի



ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՄ ՈՏՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՀ.119.105)

ԺԷ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 5 ՄԱՅԻՍ 2024 ԹԻՒ 18

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԵԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ Գրծ. 20. 17-38: Ա. Յհ. 3. 2-6: Յհ. 9. 39-10:10:

ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 9. 39-10: 10

Յիսուս ըսաւ. «Աշխարհ եկայ յայտնելու, թէ որո՞նք են կոյրերը եւ որոնք՝ տեսողները. որպէսզի կոյրերը տեսնեն եւ անոնք, որ կը տեսնեն՝ կուրնան»:

Փարիսեցիներէն ոմանք, որոնք իր շուրջն էին, լսեցին ասիկա եւ հարցուցին. «Արդեօք մե՞նք ալ կոյր ենք»:

Յիսուս անոնց պատասխանեց. «Եթէ կոյր ըլլայիք, մեղք պիտի չունենայիք. բայց քանի կըսէք, թէ կը տեսնէք կը նշանակէ, թէ ձեր մեղատը ըլլալը կը հաստատէք: Հաստատ գիտցէք ան, որ ոչխարներուն փարսխը դռնէն չի մտներ, այլ՝ ուրիշ տեղէ կը մագլցի, անիկա գող է եւ աւագակ: Իսկ ան, որ դռնէն կը մտնէ՝ անիկա ոչխարներուն հովիւն է: Դռնապանը դուռը կը բանայ անոր եւ ոչխարները իր ձայնին կը հետեւին: Իրենց անուններով կը կանչէ իր ոչխարները եւ դուրս կը տանի զանոնք: Եւ երբ իր ոչխարները դուրս կը հանէ, ինք կ'առաջնորդէ եւ ոչխարները կը հետեւին իրեն, որովհետեւ իր ձայնը կը ճանչնան: Օտարին չեն հետեւիր, ընդհակառակը կը փախչին անկէ, որովհետեւ օտարներու ձայնը չեն ճանչնար»:

Յիսուս այս առակը խօսեցաւ անոնց, սակայն անոնք չհասկցան, թէ ի՞նչ ըսել կ'ուզէր իրենց: Ուստի Յիսուս կրկին ըսաւ անոնց. «Հաստատ գիտցէք, թէ են եւ ոչխարներուն դուռը: Բոլոր անոնք, որոնք ինձմէ առաջ եկան, գող էին եւ աւագակ, բայց ոչխարները անոնց չհետեւեցան: Ես եմ դուռը: Ով, որ ինձմէ անցնելով ներս մտնէ՝ պիտի փրկուի, պիտի մտնէ եւ ելլէ եւ ճարակ գտնէ: Գողը կու գայ միայն գողնալու, սպաննելու եւ փճացնելու համար: Ես եկայ՝ որպէսզի կեանք ունենան եւ լեցուն կեանք ունենան»:

Տէ՛ր, հեռացու՛ր ինձմէ փառասիրութիւնը, որովհետեւ անիկա զիս կը գրկէ երկինքի փառքի ժառանգութենէն: Հեռացու՛ր ինձմէ գահասիրութիւնը, որովհետեւ անիկա զիս կը գրկէ Քեզի գահակից ըլլալու փառքէն: Հեռացու՛ր ինձմէ դրամասիրութիւնը, որովհետեւ անիկա կը փակէ առջեւ երկինքի գանձատան դուռը:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ



Քրիստոս իր հրաշափառ յարութենէն 40 օր ետք երեւցաւ իր աշակերտներուն՝ անոնց հետ խօսելով Աստուծոյ արքայութեան մասին:

Քառասուններորդ օրը Յիսուս պատւիրեց աշակերտներուն Երուսաղէմ մնալ մինչեւ Պենտեկոստէի օրը, երբ Ա. Հոգին պիտի իջնէ երկինքէն եւ բնակի անոնց մէջ:

Այնուհետեւ իր աշակերտներուն հետ Քրիստոս Զիթենաց լեռը բարձրացաւ, ուր օրհնեց զանոնք: Եւ երբ կ'օրհնէր երկինք բարձրացաւ բոլորին աչքին առջեւ: Երբ տակաւին առաքեալները իրենց աչքերը երկինք յարած՝ Յիսուսի մեկնիլը կը դիտէին, ահա երկու սպիտակագգեստ մարդիկ երեւցան անոնց եւ ըսին.

—Ո՛վ Գալիլացիներ, ինչո՞ւ կեցեր երկինքը կը դիտէք: Այս Յիսուսը, որ երկինք համբարձաւ, օր մը դարձեալ պիտի գայ այնպէս՝ ինչպէս անոր երկինք երթալը տեսաք:

Քրիստոս համբարձաւ, որպէսզի երկինքը երկրին միաւորէ եւ աստուածացնէ ու փառաւորէ մարդկային բնութիւնը:

Ան երկինք ելաւ եւ նստաւ Հօրը աջ կողմը առանց լքելու իր սիրելի առաքեալները եւ բոլոր անոնք, որոնք կը հաւատան եւ կը սիրեն զինք:

Յիսուս ըսաւ.

«Ես Ձեզի ՀեՏ եմ, միւշեմ աշուարչի սերջը»:

ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

Ի՞նչ է ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՐԴԻԻՆՔԸ ՀԱՒԱՏԱՅԵԱԼՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ

Ինչպէս, որ աղօթքը կը սրբէ մեզ եւ կը մօտեցնէ Աստուծոյ, այնպէս ալ, երբ մենք հաղորդուինք Փրկիչի մարմնին եւ արիւնին, կը սրբուինք եւ կը նմանինք Անոր, որ մարդիկը փրկելու համար մեղքի ապականութենէն, իսպիւր վրայ թափեց իր մաքուր արիւնը: Եւ կը զգուշանանք մեղքերէ մտածելով, որ մեղքը կը խափանէ մեր հաղորդութիւնը Սուրբին եւ Սրբութեան հետ: Գրիգոր Տաթեւացին կ'ըսէ. «Այս խորհուրդին գործն է աւելցնել Շնորհքը եւ դեղ ըլլալ ամենօրեայ մեղքերու» (Գրիգ Լարցմանց, էջ 594): Այս է պատճառը, որ Քրիստոսի չարչարանքները պիտի յիշենք հաղորդուելով:

Իսկ Յովհաննէս Մանդակունի հայրապետը կ'ըսէ. «Անոնք, որ հաւատով եւ երկիւղածութեամբ կը մօտենան Քրիստոսին, կը լուսաւորուին Սուրբ Հոգիով եւ օրէ օր առաքիւնի գործերով վեր կը բարձրանան»:

ԱՌԱԿ ԳԼՈՒԽ ԺԵ. 10-12

Բարի մարդուն իրատը ընդունելի է հարազատներուն համար, իսկ անոնք, որ յանդիմանութեան չեն հանդուրժեր՝ վարկաբեկիչ վախճան պիտի ունենան:

Երբ մահն ու կորուստը յայտնի են Տիրոջ, որքան եւս առաւել՝ մարդոց սրտերը:

Անուղիղ մարդը չի սիրեր զինք յանդիմանողը եւ չի հաղորդակցիր գիտակից մարդուն հետ:

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ

ՏԵՐԸ ԲՈՂՈՐԻՆ ՊԻՄԱՅ ՄԵՆԱԷ ՔԵԶԻ ՀԱՄԱՐ, ՈՒՍԻՒ ԲՈՂՈՐԻՆ ՊԻՄԱՅ ԽՈՍՏՈՎԱՆԻՐ ՉԱՅՍ

Ամենէն մեծ նախատինքը մարդուն համար իսպիւր վրայ մեռնիլն էր: Եւ ահա Քրիստոս ամենէն նախատելի ձեւով մահացաւ իմ եւ քու մեղքիդ պատճառով: Խաչելութեամբ մահանալը նախատինք ու դժուարին էր, որովհետեւ իսպիւր վրայ մահացողին մահը կը դիտուէր բազմաժամար մարդոց կողմէ՝ սիրելիներէն ու թշնամիներէն, եւ այս իրողութիւնը առաւել եւս տանջանք կը պատճառէ իսպիւր վրայ գամուողին: Խաչուող մարդը երբեք պիտի չուզէր դիտուիլ իր սիրելիներուն կողմէ, որպէսզի անոնց տառապանքի պատճառ չդառնար, ոչ ալ պիտի ուզէր դիտուիլ զինք չսիրողներուն կողմէ՝ որպէսզի անոնց ուրախութեան պատճառ չդառնար:

ՄԵՐ ՍՈՐԿԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Սիրելիս, դուն պիտի ուզէի՞ր բոլորին դիմաց իսպիւրի, բայց մանաւանդ, պիտի ուզէի՞ր, որ մայրդ քեզ տեսնէր իսպիւր վրայ՝ արինաթաթախ վիճակի մէջ, կաթիլ մը ջուրի կարօտ: Այսօր որոշէ, բոլորին դիմաց խոստովանիլ Յիսուսը, որովհետեւ ան բոլորին դիմաց մեռաւ քեզի համար:

ՄԻՐԷ ՏԵՐԸ ԱՄԲՈՂՋ ՀՈԳԻՈՎ

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒՉԵՍ...

ԵԹԷ Կ'ՈՒՉԵՍ ԳԻՏԱԿ, ԹԷ ԱՏՈՒԾՈՅ ԱՊԱՐԻՆՈՂԸ ԻՆՉ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՏՆԷ՝ Կարդա՛ր ՍԱԳՄՈՍ 18

Կը սիրե՛մ՝ քեզ, Տէ՛ր՝ գորութիւնս, Տէ՛ր՝ իմ վէ՛մս, ամբութիւնս ու փրկի՛չս: Աստուածս իմ պարի՛սպս է, ես անոր կ'ապաւինիմ: Իմ վահանս է ան, փրկութեանս գորութիւնը, եւ իմ բարձր աշտարակս:

Օրհնեցութեամբ Տէ՛ր՝ օգնութեան կանչեցի, եւ զիս ազատեց թշնամիներէս: Մահուան տագնապը զիս պաշարեց, կորուստի հեղեղները խոռվեցուցին զիս, մահուան աշխարհը զիս պաշարեց, եւ մահուան որոգայթները լարուեցան ինծի դէմ: Նեղութեանս մէջ ՏԻՐՈՋ դիմեցի, փրկութեան համար իմ Աստուծոյս աղաղակեցի, եւ անկա իր տաճարէն լսեց ձայնս, աղաղակս անոր ականջը հասաւ: Այն ատեն երկիրը սասանեցաւ ու դողաց, լեռներուն հիմերը շարժեցան ու սասանեցան անոր բարկութենէն: Անոր քիթէն ծուխ բարձրաձայն, բերնէն լափող կրակ ժայթքեց եւ կայծակներ սուրացին ամէն կողմ: Անկա երկինքը խոնարհեցուց եւ իջաւ թանձր ամպի վրայ կանգնած: Քերովքէի մը վրայ հեծաւ եւ թռաւ, ու հովին թեւերով սլացաւ:

Խաւարը իրեն ծածկոյթ դարձուց, զինք շրջապատող խաւարային ջուրերն ու ամպերը՝ իրեն բնակարան: Անոր ներկայութեան փայլատակումէն ամպերը կարկուտ ու կայծակ ժայթքեցին: Տէ՛ր՝ երկինքէն որոտաց, Բարձեալը իր ձայնը լսելի դարձուց կարկուտով ու կրակոտ կայծակներով: Իր նետերը դրկեց եւ ցրուեց թշնամիներս, իր փայլատակումները բազմացուց եւ խոռվի մատնեց զանոնք: